

արեւուն նոր բացումը՝ մշակներու և ծնողներու հարստ ուրախութիւնը կը կազմէին։ Վարժարանը փինիկ հաւի պէս՝ աւերակներէն վերստին կենդանացած սիրտը բացած էր կրկին հոն ամփոփելու հայ մանուկները, գաւառի սիրելի, դաստիարակելու, հայացնելու համար։ Պէտք է հրաշքի վերագրել այն ինչ որ եղած է այս Հաստատութիւնը վերականգնելու համար. հոն դրամէն աւելի սիրտ մաշած է, բրիչէն և բահէն աւելի բազուկներ պարտասած։ Եւ ահա ոչ միայն հայկական ծովածառը բազմութիւն մը ծնողներու, բարեկամներու և համակիրներու եկած էին հայութեան խնդակցութիւնը բերելու, այլ և բարձրաստիճան Ֆրանսացիներ, Ժուլիա եղբայրները՝ Ռամատիէի թոռները՝ Մովսիս և Օդային նախարարութեանց ներկայացուցիչներ, Զօրավար Տիւրան՝ բանակին ներկայացուցիչ, Պ. Ֆուա ներկայացուցիչ Ազգային ապահովութեան, Հրամանատար Լիւտենտէն Գիմարականներու պետը, Պիլլիէ՝ վերատեսուէ բժշկական Լարուսին, և այլն։ Հանդէսին կը նախագահէր քահանայապետական դեսպան Գերպ. Ռոմբալլի, իր կողքին ունենալով Միթարեան Աբբահայրը և Արտաւազը սրբազան Սիրմէեանը։

Վարժարանի քաղաքական տնօրէն, համբաւաւոր աշխարհագէտ, Պ. Զատիկ Խանգատեան, քանի մը խօսքով ներկայացուց բարձրաստիճան հիւրերը, յայտնելով վարժարանի երախտագիտութիւնը Ֆրանսական ժողովրդեան և պետութեան հանդէպ։ Ապա՝ Գերպ. Սրապիոն վ. Ուլուհոնեան Ֆրանսերէն լեզուով կարգաց գեղեցիկ ուղերձ մը, ուր ըրաւ նախ Սամուէլ Մուրատեան վարժարանի հիմնադրութեան պատմականը. «Հարիւր տարի է, ըսաւ, որ Սամուէլ Մուրատեան վարժարանի տեսչութիւնը կը տօնէր հանդիսաւորապէս դպրոցին բացումը, Ֆրանսական հեղինակութիւններու հովանաւորութեան տակ, մասնաւորապէս Լամարթիին և Կիլզոյի։ Վենետիկի Միթարեան հայրերը այն ժամանակ փարիզի մէջ լոյսի տաճարի մը հիմքը կը դնէին, այս լոյսի կեդրոնին մէջ՝ ուր պիտի կազմուէին հայ ազգին գաւազները, իրենց կարգին տանելու համար դէպի Մերձաւոր Արեւելք քաղաքակրթութեան և գիտութեան բարիքները, ինչպէս նաեւ ազատութեան շունչը, որուն յառաջապահն եղած է միշտ այս Ֆրանսացի ազնիւ ցեղը։ 1846ի՝ 11 Յուլիսին՝ Լուի

Ֆիլիպպի արքայական հրովարտակ մը Մուրատեան վարժարանին կը շնորհէր բացառիկ դիրք մը, զայն դնելով Ֆրանսական կառավարութեան տակ, ճանչնալով արտասահմանեան իբր հանրօգուտ գործ, տալով ուսումնական, վարչական, մատակարարական լիովին ազատութիւն»։

«Այնուհետեւ Մուրատեան վարժարանը հայ ազգին հասցուց բազմաթիւ անուանի գաւազներ, քաղաքական, գիտական, գրական և այլ բոլոր ասպարէզներուն մէջ։ Ազգի մը մեծութիւնը սեղմօրէն կապուած է նոր սերունդի կրթութեան հետ։ Գաստիարակութիւնը միայն թոյլ կու տայ չափելու ազգերուն մեծութիւնը։ Հարկւոք տարիներ ցոյց կու տան այս վարժարանին կենսունակութիւնը, անոր կազմակերպութեան հոգին, անոր ուսումնական բարձրութիւնը, ինչ որ գրաւական մ'է նաեւ ֆալիք ժամանակներուն համար։ Զեզ կ'ապահովցնեմ թէ մենք երբեք կանգ պիտի չառնենք այս ակօսուած ճամբուն վրայ. ծանր, բայց փառաւոր ժառանգութիւն մը մեր հայրերուն՝ պիտի շարունակենք անխախտ հաւատքով մանաւանդ աւելի եւս յառաջդիմելով պիտի ընթանանք»։ Զետոյ իր շնորհակալութիւնը յայտնեց Քահանայապետական Գեսպանին, բարձրաստիճան հիւրերուն և բոլոր հանդիսականներուն որ եկած էին իրենց ներկայութեամբ այս հանդէսը փառաւորելու։

Ապա հայրական շէշով խօսեցաւ քահանայապետական դեսպանը, «Քսան տարի է, ըսաւ, որ սերտ շփման և սիրալիր յարաբերութեան մէջ ապրած եմ հայ ազգին գաւազներուն հետ, նախ՝ Կ. Պոլիս ապա Սֆիւս. զանոնք գտած եմ մտացի, գործունեայ, մանաւանդ համբաւաւոր հիւրասէրներ. ժողովուրդ մը չարագոյն բախտէն զարնուած որ գիտէ ապրիլ և յառաջդիմել. ահա ակնբախ ապացոյց՝ այս վարժարանը՝ որ յետ պատերազմի աւերներուն, տընտեսական և բարոյական խոչնդոտներու՝ վերստին կը կանգնի լոյսի փարոսի մը պէս։ Զետոյ անցաւ Հայ շարականներուն, աւանդութիւններուն և պատարագին ու գրականութեան վրայ. հուսկ օրհնելով ներկաները, մեկնեցաւ ստիպողական գործերու պատճառով։

Աշակերտներու խումբը երգեց Մարտիկէզը և Եփրայիմ ազատ իմ հայրենիք քայլերգները։ Բեմ ելաւ Կաթողիկոսական լիազօր պատուիրակ Եւրոպայի՝ Արտաւազը սրբ. Սիրմէեան. նա թուեց նախ իր ճամբորդութիւնները եւրո-



ՍԱՄ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԵՐԻ ՏԵՍԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ
ՄԷՋՏԵՂ՝ ԸՆԴՀ. ԱՐԲԱՀԱՅՐԸ ՈՒԽՏԻՍ՝ ԳԵՐՊ. ՍՐԱՊԻՈՆ Վ.Պ. ՈՒԼՈՒՀՈՆԵԱՆ։

պական երկիրներու մէջ, Սիրիահայ գաղութին ցաւը իրմէն բաժնուելուն, ապա անցաւ իր գրական և բարեկամական յարաբերութիւններէն. մասնաւորապէս վարժարանի տեսուչ Հ. Բուն՝ մասնաւորապէս վարժարանի հետ։ Իր ճառը Սահակ վ. Տէր-Մովսէսեանի հետ։ Իր ճառը վերջացուց փառաբանելով Միթարեաններուն գրական և դպրոցական դարաւոր գործունէութիւնը։

Հանդէսին երկրորդ մասն սկսաւ իտալերէն հայերէն և ֆրանսերէն խմբերգներով, ղեկավարութեամբ համբաւաւոր երգահան և ուսուցիչ Գուրգէն Ալեմշահին։ Հաճելի էր լսել այդ երգումի ֆրանսախօս աշակերտներուն հայերէն սիրուն արտասանութիւնները՝ վարժարանէն, Հ. Վ. Յովհաննէսեանէ և ուրիշներէ։ Հ. Յակոբ Զանթապեան, ուսումնապետ վարդապետը, տուաւ իր տարեկան գեկուցումը «Առաջին տարին է իր տարեկան գեկուցումը տարի մը այն գոր կը փակենք։ Ամբողջական տարի մը այն օրէն որ եկանք քննելու վարժարանիս շինուած թեան պայմանները, աւերակներէն նոր շէնք մը կառուցանելու անհրաժեշտ հարկը մեր աչքերուն

կը ներկայանար։ Գործը սկսանք. վերաշինութեան համար սահմանուած չորս ամիսներու ամիսի պայմանաժամը արագօրէն կ'անցնէր յոյսերու և մտատանջութիւններու մէջ։ Ահա Նոյեմբեր երեքը իր ցուրտ և խոնաւ օդերով, մեր աչքերը վարժ էին տեսնելու կիրն ու փոշին, աւերակ աւերակի վրայ, որոնք յանկարծ անյայտացան շնորհիւ անխոնջ և փութկոտ մատակարարի ջանքերուն՝ Հ. Խաչատուր վ. Վրթանէսեանի։ Գալոցը կենդանացաւ, շարժում, գոյն, աղմուկ ամէն կողմ։ Ծնողները գոհունակութեան ժպիտներով կ'առաջնորդէին իրենց մանուկները. ամէն մէկը սրտի յանձնարարութիւն մ'ունէր ընելու իր տղուն համար, մին զայն չարաճճի կ'անուանէր, միւսը բարի, ուրիշ մը մասնաւոր խնամքի կարօտ։ Աշակերտութեան թիւը առաջին օրերուն հասաւ 50ի և շուտով բարձրացաւ 65ի, երբ այլեւս տեղի անձկութեան պատճառով ստիպուեցանք նոր առաջարկները ցաւով մերժել։ Սիրեցինք մեր նոր շրջապատը, այդ կայտառ մանուկները՝ որոնց վառվռուն աչքերուն խորէն

կը ժպտէր հայ ոգին: Դպրոցական ծրագրի գործադրութեան համար պակաս չէին դժուարութիւնները, եկած զանազան վայրերէ, թերի իրենց ուսումնարան մանաւանդ հայերէնին, ուրուն մէջ լաւագոյնը՝ հազիւ կը հեզէր Մեսրոպի լեզուն: հարկ եղաւ փոքրիկ քննութենէ մը անցնել դասարանները որոշելու համար: Այսօր՝ երբ կը փակենք ուսումնական տարին, ուրախ ենք ըսելու թէ լրիւ ամբողջացուցած ենք պետական ծրագիրը, ուսուցիչներու ջանքերուն շնորհիւ չորս դասարաններն ալ ունեցան իրենց գոհացուցիչ արդիւնքը: Այսօր բոլոր աշակերտներն ալ եթէ ընթացիկ խօսիլ չեն գիտեր, գէթ կը հասկնան հայերէնը, կրնան իրենց սիրտը Մեսրոպի լեզուով պարզել և հասկնալ մեր նախնիքներու նուիրական բարբառը:

Ապա իր շնորհակալութիւնները յայտնեց բոլոր այն Հաստատութիւններուն և անհատներուն որ առանձին նուէրներով քաջալերած էին մրցանակ շահողները:

Հուսկ բեմ ելաւ Մուրատեան վարժարանին համակրելի Տեսուչը, փարիզահայութեան սիրելի Հ. Սահակ. Վ. Տէր-Մովսէսեանը, որ իր հայրենաշունչ և ճարտասան լեզուով մոգեց հասարակութիւնը, խօսեցաւ աշակերտներու և ծնողներու համար, շեշտելով իւրաքանչիւրին պարտականութիւնը դաստիարակութեան մէջ, մասնաւոր ձևով անհատը վտանգը և անհրաժեշտութիւնը բոլորովեւ Մուրատեան վարժարանին շուրջ, որ միակ պատուարն է փարիզի մէջ Հայը հայ պահելու: «Դպրոցներն եղած են, ըսաւ, դարերու ընթացքին մեր ազգին օճախը վառ պահողները, ազգ մը որ զարգացում և գիտակցութիւն չունի՝ դատապարտուած է անպայման կորուստի և Միութարեանները իրենց Երանաշնորհ Հիմնադրին լուսաւոր ճամբուն հետեւելով՝ դարերով զոհած են ու կը զոհեն իրենց հոգեկան, մտաւոր և նիւթական հարստութիւնը հասցնելու համար մեր բազմաշարքար ազգին լաւագոյն ուժեր»: Տեսչին համառօտ և կուռ խօսքերը ընդունուեցան բուն ծափերով: Յետոյ կատարուեցաւ Մրցանակաբաշխութիւնը:

Բարի վարքի համար սահմանուած Գերպ. Աբրահամ Երեք մետալները ստացան Ոսկերիչեան Գրիգոր (Գ. դաս), Սարգիսեան Պողոս (Ե. դաս), Կարապետեան Պողոս (Չ. դաս):

Առաջնութեան մրցանակ շահեցան Գ. դասու-րակէն Գ. Ոսկերիչեան, Յ. Գաբրիէլեան, Յ.

Ունճեան: Է. դասարակէն Ժ. Տէտէյեան, Ե. Տէրտէրեան, Պ. Սարգիսեան - Չ. դասարակէն Պ. Կարապետեան, Յ. Ֆերմանեան, Ն. Պետեան. Է. դասարակէն Մ. Մինէլեան, Ե. Յովակիմեան, Մ. Ալէքսանեան. - Է. դասարակէն, Ս. Թուրսարգիսեան, Յ. Պործաքեան, Ս. Ակոնայեան. - Հայերէն լեզուին համար ստացան առանձին մրցանակներ. Ոսկերիչեան Գրիգոր (Գ. դաս), Կառվարենց Տիրան (Ե.), Պետեան Նշան (Չ), Տողրամանեան Կարօ (Է), Թուրսարգիսեան Սարգիս (Է): Վարժարանի տեսչութիւնը մրցանակներ ստացած էր Ֆրանսացի զանազան բարեկամներէ Ֆրանսերէն լեզուին համար, որոնց արժանացան՝ Ոսկերիչեան Գրիգոր (Գ. դասարանէն), Տէտէյեան Եղուարդ (Ե), Սողոմոնեան Հրանդ (Չ), Մինէլեան Մինհրան (Է), Ակոնայեան Ստեփան (Է): Սամուէլ Մուրատեան վարժարանի տեսչութիւնը հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Անհրապարտ Գերպ. Աբրահամ, Կաթողիկոսական լիազօր պատուիրակ Արտաւազդ Աբրահամին, Հայ Ընդհ. Բարեգործական միութեան, այրի տիկին Ֆիմի Բասմանեանին, Պ. Սովիշնաքին իրենց զրկած մրցանակներուն համար: Մասնաւոր շնորհակալութիւն Հայկ. Կապոյտ Խաչի ազնիւ տիկիններուն, որոնք սիրայօժար տրամադրած են ամէն տարի որոշ գումար մը հայերէնի քաջագոյն աշակերտներուն մրցանակներ տալու համար:

Գ. Ալեմշահ կրկին բեմ կանչեց վարժարանի երգչախումբը, և քաղցրաձայն մանուկներ այս անգամ երգեցին Հ. Վահան Յովհաննէսեանի «Հայաստան» քերթուածին վրայ Ալեմշահէն հեղինակուած զգայուն և հոգեպարար քայլերգը, դարձեալ արտասանութիւններ և ուղերձներ աշակերտներու կողմէն ու հանդէսը շուրջ երկու ժամ յետոյ փակուեցաւ Միութարեան վարժարաններու քայլերգով «Քաջաց գեւրի»:

Ժողովուրդը շատ զանգաղօրէն կը բաժնուէր այնքան սիրելի վարժարանէն, ինքն ալ կ'ուզէր զեւ շնչել այդ հայկական միջավայրին հոգեպարար օդը, խօսիլ վարդապետներուն հետ, իր սիրտը հովացնել հայրենի կարօտներով, մինչ ծնողները բռնած իրենց զաւակներու ձեռքերէն զանոնք տուն կ'առաջնորդէին ամբողջ արձակուրդ մը վայելելու համար գորովանքի և սիրոյ մէջ:

Թ. ԵՐՈՐՑԵԱՆ

ԹԱՆԿԱԳԻՆ ՆՈՒԷՐ ՄԸ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Միութարեան Միաբանութիւնը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ այրի Տիկին Ֆիմի Բասմանեանին՝ որ իրագործելով ողբացեալ մեծ գիտնականին փափաքը, Միաբանութեան Մատենադարանին նուիրեց հանդուցեալին ճոխ գրատունը:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԻԻԹ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

“ԲԱԶՄԱՎԷՊ” Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

- ԵԳԻՊՏՈՍ Հ. Քերոբէ Վ. Զրաքեան, Միսիր. Վարժարան Աղեքսանդրիոյ, 18 Rue Station, Shutz.
- ՀԱԼԷՊ Հ. Եսայի Գոռզեան Միսիրաբեան Վարժարան Հալեպի.
- Հ. Աւետիք Ծովեան
- ՓԱՐԻԶ - Պր. Բարգէն Պոտտեան, 22 Rue Stendhal, Paris (20)
- Բաժնեկրին վճարումը կատարել կամ Պր. Բարգէն Պոտտեանին և կամ Սելի Մուրատեան վարժարանի Մատակարարութեան. C. C. P. 555.84
- ԼՈՆՏՐՈՆ - Պր. Աբշակ Սաֆրաստեան, 18 Eton Villas, London N. W. 3.
- ՊՈՍԹԸՆ - Պր. Ենովք Լաչինեան, 268 Northampton St. Boston 18, Mass.
- ՊՈԼԷՆՈՍ ԱՅՐԷՍ - Պր. Փանոս Էօրնէքեան, C.nel Niceto Vega 5531.
- ՄԻԼԱՆ - Օր. Պերճուհի Պողոսեան, Viale Porta Vercellina 1, Milano.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

«ՃԵՂՔՈՒԱԾ ՍԻՐՏ»

բանաստեղծութիւններ

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

Յառաջաբանով ծանօթ գրագիտուէի՝ ԶԱՐՈՒՀԻ ԳԱԼԵՄՔԵԱՐԵԱՆԻ: Փայլուն թուղթ, ընտիր տպագրութիւն. զին՝ 75 սէնթ

Դիմել Հեղինակին

HAGOP KOOYOOMJIAN

3622 Spring Garden St.

PHILADELPHIA 4. Pa. (U. S. A.)

POESIE

in lingua armena di

VAHAN HOVHANNESIAN

Tradotte dall'Autore e rese in versi sciolti Italiani da

FILIPPO BASLINI

Pag. 268

Prezzo netto L. 300.—

